ՎՐԱՍՏԱՆ. ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Կարեն Վերանյան

Հարավային Կովկասում ներկայում ընթանում է ռազմականացման գործընթաց։ 2003թ. իշխանափոխությունը Վրաստանում, փաստորեն, տարածաշրջանում որակապես նոր ակտիվություն հաղորդեց սպառազինության մրցավազքին։ Այն պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում և վրաց-աբխազական ու հարավօսական հակամարտությունների սրմամբ։ Դեռևս 2004թ. հուլիսի վերջին Վրաստանի կառավարության նիստում որոշում էր ընդունվել շուրջ 97 մլն լարիով ($48 մլն) ավելացնել Վրաստանի բոլոր ուժային գերատեսչությունների ֆինանսական միջոցները։ Պետբյուջեի նախագիծը, սակայն, խորհրդարանում այնքան էլ գոհունակությամբ չընդունվեց, քանի որ երկրի պաշտպանության նախարարությանը (ՊՆ) տրամադրվող ֆինանսական միջոցները համարվեցին ոչ բավարար։ Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեի խոսքերով՝ «այն երկրի պաշտպանության նախարարությունը, որը զրկվել է իր տարածքի մի մասից, կարիք ունի տարեկան 200 մլն լարիի»։ Առաջարկվում է այս տեսչությանը տրամադրել գոնե 150 մլն լարի ($79 մլն)։ Պաշտոնական Բաքուն 2005թ. նախատեսում է պետբյուջեից ռազմական ոլորտին հատկացնել $250 մլն, ինչը 33%-ով ($82.5 մլն) գերազանցում է ընթացիկ տարվա համապատասխան ցուցանիշը՝ շուրջ $167.5 մլն (այլ աղբյուրի համաձայն՝ $146 մլն)։

Ուժային գերատեսչություններում իրականացվող վերադասավորումների շուրջ

Վրաստանի ուժային համակարգը վերջին ամիսներին լուրջ վերադասավորումների ենթարկվեց։ Դրանք պայմանավորված են թե՛ երկրի ներքաղաքական և թե՛ հարավկովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացներով։ Երկրի նախորդ իշխանությունները կենտրոն-մարզ լիազորությունների սահմանազատման հարցում առավել մեղմ դիրքորոշում էին ցուցաբերում, իսկ ՊՆ-ին գլխավորապես տրվում էին ոչ ուժային ֆունկցիաներ։

Երկրի ուժային համակարգի վերադասավորումներն իրագործվեցին, առաջին հերթին, ներքին գործերի նախարարությունում (ՆԳՆ). նախ՝ վրաց-հարավօսական հակամարտության գոտու վրացի խաղաղապահներին, որոնք գերազանցապես ներկայացնում էին ՆԳՆ համակարգը, փոխարինեցին ամերիկյան հրահանգիչների կողմից վերապատրաստված ՊՆ ուժերը: Իսկ ավելի ուշ բարեփոխումների փաթեթը նախատեսում էր լուծարել երկրի ՆԳՆ համակարգը և այն ենթակայել ՊՆ Գլխավոր սպայակույտին (աշխատանքներն ավարտվեցին մինչև 2004թ. նոյեմբերի 1-ը): Որպես հիմնական պատճառ նշվում էին ՆԱՏՕ չափանիշներին համապատասխանեցման գործընթացը, բանակի արդյունավետ կառավարումը: Բացի նշվածից, պատճառ էր հանդիսանում նաև ՆԳՆ համակարգի անարդյունավետությունը: Հարավային Օսիայի Ջավայի բարձունքներում վրացական կողմի կրած կորուստները (ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն, վրացական կողմը տվել էր ավելի քան 90 զոհ) և դրան նախորդող այլ օպերատիվ գործողությունները գլխավորապես իրագործվում էին հենց այս կառույցի շրջանակներում: ՆԳՆ համակարգի լուծարմամբ, որի աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմում է շուրջ 8.000-10.000, այն փաստորեն դառնում է ապառազմականացված կառույց: Վերջինիս տրամադրության տակ են մնալու ընդամենը 1.000-1.500-անոց հատուկ նշանակության զորքեր, որոնց գլխավոր խնդիրը հասարակական կարգի պահպանումն է:

Ռազմական ոլորտի բարեփոխումների հաջորդ փաթեթը վերաբերում էր ազգային բանակի խնդիրներին: Մասնավորապես, պաշտպանական համակարգի օպտիմալացման նպատակով նախատեսվում է զինծառայության երկամյա ժամկետը կրճատել մեկ տարով (ուսանողների զինծառայությունը ծրագրվում է սահմանել ընդամենը վեցամսյա ժամկետով): Բացի այդ, գործող վարչակարգը մտադիր է լրջորեն զբաղվել պահեստազորային ինստիտուտի կայացման խնդիրներով: Արդեն ավարտին է հասցվել առաջին 300 պահեստազորայինների ուսուցանումը. նրանք մեկամսյա ժամկետում անցել են կրակային, ֆիզիկական ու մարտավարական պատրաստություն: Գումարտակի գերակշիռ մասը կազմում էին Բաթումի արագ արձագանքման ջոկատի փորձառու զինվորներն ու Ազգային գվարդիայի գնդապետ, Վրաստանի առաջին նախագահ Զ.Գամսախուրդիայի կողմնակից Ակակիա Էլիավի նախկին զինակիցները: 2004թ. օգոստոսի վերջին երկրի նախագահը հանդես եկավ Վրաստանի ազգային բանակի պահեստազորը նաև կանանցով համալրելու հայտարարությամբ:

ՆԱՏՕ-Վրաստան հարաբերությունների ակտիվացման շուրջ

ՆԳՆ լուծարումը, սակայն, չպետք է միանշանակ վերագրել կառույցի օպերատիվ ձախողումներին: Անհրաժեշտ է իրավիճակը դիտարկել նաև հարավկովկասյան քաղաքական գործընթացների տեսանկյունից: Հյուսիսատլանտյան դաշինքը ներկայում առավել մեծ ուշադրություն է դարձնում Հարավային Կովկասին ու Կենտրոնական Ասիային: Դա վկայում է նաև այն հանգամանքը, որ ՆԱՏՕ-ն այս տարածաշրջաններում նշանակեց իր հատուկ ներկայացուցչին՝ Ռոբերտ Սիմոնսին:

ՆԱՏՕ-ի համակարգին ինտեգրվելն այսօր Վրաստանի արտաքին քաղաքականության գլխավոր գերակայություններից մեկն է, որի նախապայմաններից են նաև երկրի ուժային համակարգը ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցնելն ու շարժուն զորամիավորումներ ստեղծելը: Ուժային տեսչությունների համապատասխանեցումը ՆԱՏՕ-ի չափանիշներին ինքնին առաջադրում է զինված ուժերի (ԶՈՒ) օպտիմալացում, զորքերի շարժուն համակարգի ստեղծում: Հյուսիսատլանտյան դաշինքը Վրաստանի հետ որակապես նոր հարաբերություններ է մշակում: 2004թ. հոկտեմբերի 29-ին ՆԱՏՕ-ի ղեկավարությունը վավերացրեց «Վրաստանի հետ անհատական գործընկերության ծրագիրը», որը նախատեսում է երկրի քաղաքականության, անվտանգության և պաշտպանության ոլորտների բարեփոխումներ: Դեռևս 2004թ. հոկտեմբերի սկզբին Վրաստան էր ժամանել ՆԱՏՕ-ի Միջազգային ծառայության պաշտպանական քաղաքականության վարչության պատվիրակությունը՝ Բրյուս Բախի գլխավորությամբ: Հանդիպումների ընթացքում, ի թիվս այլ խնդիրների, քննարկվեց նաև Վրաստանի ԶՈՒ-ն ներքին զորքերին միակցելու հարցը: Պաշտոնական Թբիլիսին նախատեսում է, որ վերոնշյալ ծրագրի հաջող իրագործումից հետո կանցնի «ՆԱՏՕ-ի հետ միավորման ծրագրի» նախապատրաստական աշխատանքներին:

ՆԱՏՕ-ին անդամակցության հարցում, սակայն, վրացական իշխանությունները դեռևս չիրագործված լուրջ խնդիրներ ունեն: Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցության գլխավոր նախապայմաններից մեկն էլ ազգային անվտանգության հայեցակարգի ստեղծման խնդիրն է, որը մինչև օրս չի մշակվել հարավկովկասյան այս հանրապետությունում: Այս խնդրում պաշտոնական Թբիլիսիին աջակցում է Միացյալ Նահանգները:

Դեռևս 2003թ. հունվարի 29-30-ին Վրաստանի նախորդ կառավարությունը Թբիլիսիում կազմակերպել էր «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգ» թեմային նվիրված համագումար, որտեղ քննարկման էր դրվել նոր հայեցակարգի նախագիծը: Համագումարին մասնակցում էին նաև փորձագետներ մերձբալթյան երկրներից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից ու Գերմանիայից: Հայեցակարգի նախագծի հեղինակները, ի

թիվս ազգային անվտանգության դրույթների, ընդգծում էին նաև ներքին ու արտաքին սպառնալիքներից անհատի, հասարակության ու պետության իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտությունը:

Վրաց-ամերիկյան ռազմական համագործակցությունը

Վրաց-ամերիկյան համագործակցությունն ամրապնդվում է ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ ռազմական ոլորտներում: Դեռևս 2004թ. հուլիսի 14-ին կողմերը ստորագրեցին մի պայմանագիր, ըստ որի՝ Վրաստանին էր հատկացվելու $12 մլն ռազմական օգնություն՝ ԶՈՒ զինման, վրացի զինծառայողների ծառայողական պայմանների բարելավման նպատակներով:

2004թ. սեպտեմբերի սկզբներին ավարտվեց Վրաստանի ՊՆ ենթակազմում գտնվող խաղաղապահ «Շավնաբադ» թվով 4-րդ գումարտակի վերապատրաստումը: Ամերիկացի հրահանգիչները նախորդ երեք գումարտակների վերապատրաստմանը հատկացրել էին $64 մլն: Վրաստանի ԶՈՒ 11-րդ մոտոհրաձգային բրիգադի՝ 470 վրացի զինծառայողներից բաղկացած 111-րդ գումարտակը միամսյա վերապատրաստման դասընթացը կրկին անցել է ամերիկյան հրահանգիչների ծրագրերով և անմիջական նախաձեռնությամբ: Գումարտակի զինծառայողները մեկնելու են Իրաք և Կոսովո՝ խաղաղության աջակցման առաքելությամբ: Մասնավորապես, նախատեսվում է Իրաքում գտնվող վրաց խաղաղապահ ուժերի կազմը հասցնել մինչև 850-ի: Բացի այդ, զինծառայողների մի մասն ուղարկվելու է Աֆղանստան: Նրանց շարքերը համալրելու է Սաչխերի 16-րդ լեռնահրաձգային գումարտակի հետևակի ուժեղացված դասակը: «Աջակցություն ահաբեկչության դեմ պայքարում» ծրագրի շրջանակներում 2005 ֆինանսական տարում Վաշինգտոնը Վրաստանին է տրամադրելու ավելի քան $15 մլն: Նախատեսվում է Վրաստանում 2004թ. վերջից սկսել հավելյալ 4.000 զինծառայողի վերապատրաստման ծրագիր: ԱՄՆ պետքարտուղարության մամուլի ծառայության տեղեկատվության համաձայն, վերջին երեք տարիների ընթացքում ահաբեկչության դեմ պայքարին աջակցության ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ը Վրաստանին է տրամադրել ընդհանուր առմամբ $47 մլն:

2004թ. հոկտեմբերի կեսերին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն ու Սենատը վավերացրին երկրի 2005 ֆինանսական տարվա պաշտպանական բյուջեն՝ $477 մլրդ: Նախատեսվում է, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում զանգվածային ոչնչացման զենքը չտարածելու ամերիկյան նոր «Մետաքսե ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում, «օդաչուական ծրագրի» իրականացման նպատակով Վրաստանին հատկացնել $10 մլն:

Վրաց-թուրքական ռազմական համագործակցության շուրջ

Թուրքիան շարունակում է Հարավային Կովկասում քաղաքական, տնտեսական ազդեցություն ձեռք բերելու իր քաղաքականությունը: Անկարան ձգտում է ամրապնդվել տարածաշրջանում նաև որպես ՆԱՏՕ-ի ազդեցիկ անդամ երկրներից մեկը: Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների սերտացմանը, հատկապես ռազմական բնագավառում, ձգտում է նաև Վրաստանը: Դեռևս 1999թ. նոյեմբերի 17-ին ստորագրվեց թուրք-վրացական մի պայմանագիր, որը նախատեսում էր Վրաստանի ԶՈՒ արդիականացման նպատակով ֆինանսական միջոցներ հատկացնել: 1999թ. այդ ծրագրի շրջանակներում (այդ թվում և Մառնեուլի օդանավակայանի, ՊՆ Կոջորի ուսումնական կենտրոնի արդիականացման ծրագրերին) Թուրքիան Վրաստանին տրամադրեց ընդհանուր առմամբ $2.1 մլն: 2000թ. Թուրքիան Վրաստանին է տրամադրել $4 մլն ռազմական օգնություն, 2001թ. այն կազմել է ընդամենը $2.5 մլն: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ թեև թուրք-վրացական ռազմական համագործակցությունը շարունակում է կայուն մնալ, այնուհանդերձ, Թուրքիայի կողմից Վրաստանին տրամադրվող ռազմական աջակցության ծավալը գնալով նվազում է:

2005թ. Թուրքիան նախատեսում է Վրաստանին հատկացնել $2 մլն ռազմական աջակցություն (1998թ. այն կազմել է $ 5 մլն): Այն ուղղվելու է Վրաստանի Ազգային ռազմական ակադեմիային, Մառնեուլի օդանավակայանին (Վրաստանի ղեկավարությունը նախատեսում է օդանավակայանը շահագործել որպես երկրի ռազմաօդային ուժերի տեղակայման հիմնակետ), Գլխավոր սպայակույտի ստորաբաժանումներից մեկին, երկրի ռազմածովային ուժերին: 1998-2004թթ. Թուրքիան հարավկովկասյան այս հանրապետությանն է տրամադրել ընդհանուր առմամբ $37.4 մլն ռազմական օգնություն:

Մեծ Բրիտանիան՝ Վրաստանի երրորդ խոշոր ռազմական գործընկեր

Հարավային Կովկասում ընթացող զարգացումներին ուշադրությամբ է հետևում նաև Մեծ Բրիտանիան: Վերջին ամիսներին բավականին ակտիվացել են վրաց-բրիտանական հարաբերությունները հատկապես ռազմական բնագավառում: Ներկայում Մեծ Բրիտանիան, Միացյալ Նահանգներից ու Թուրքիայից հետո, Վրաստանի ԶՈՒ-ին աջակցության տրամադրման տեսանկյունից երրորդ խոշոր երկիրն է: Դեռևս 2004թ. հուլիսի 12-ին Մ.Սահակաշվիլին եռօրյա պաշտոնական այցով գտնվում էր Մեծ Բրիտանիայում, որտեղ հանդիպումներ ունեցավ Մեծ Բրիտանիայի թագուհի Ելիզավետա Երկրորդի, վարչապետ Թոնի Բլերի հետ:

Լոնդոնը մեծ նշանակություն է տալիս Վրաստանի կայունությանը: Կարևորվում են հատկապես Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անվտանգության ապահովման խնդիրները, որոնց նկատմամբ առանձնահատուկ շահագրգռություն են ցուցաբերում թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Մեծ Բրիտանիան: Բրիտանացի սպաներն ու ռազմական հրահանգիչները դեռևս 2004թ. հունիսի վերջից սկսել են պաշտոնապես աշխատել Վրաստանում. այդ ժամանակ Վրաստան էին ժամանել Մեծ Բրիտանիայի ԶՈՒ հետևակային երկու վաշտ՝ Թբիլիսիից ոչ հեռու տեղակայված Վազիանիի ռազմականայի՝ բրիտանական կողմի վարձակալած հրաձգարանում ռազմադաշտային զորավարժություններ կազմակերպելու նպատակով: Նշենք նաև, որ Վրաստանի ՊՆ համակարգում մշտական կարգավիճակով աշխատում է անգլիացի գեներալ Հարի Ջոնսոնը: Վերջինս զբաղվում է հարավկովկասյան հանրապետությանը տրամադրվող ռազմական աջակցության համակարգման գործունեությամբ:

Դիտորդների մի մասի կարծիքով, 2004թ. ընթացքում նկատված ամերիկա-բրիտանական նոր որակի ռազմական ակտիվությունը Հարավային Կովկասում Մոսկվայի համար լրացուցիչ գլխացավանք է հանդիսանում: Որոշ հարցերում, մասնավորապես՝ բրիտանական ակտիվության պարագայում, Կրեմլը, թերևս, փորձի խաղարկել նավթային լծակը՝ կասկածի տակ դնելով Ռուսաստանում *British Petroleum*-ի նավթագազային նախագծերի իրագործումը:

Ֆրանսիան ակտիվացնում է ռազմական համագործակցությունը Վրաստանի հետ

Ներկայում Վրաստանի հետ ռազմական հարաբերությունների զարգացման հարցում մեծ շահագրգռություն է ցուցաբերում այնպիսի ազդեցիկ եվրոպական երկիր, ինչպիսին է Ֆրանսիան: Ըստ Վրաստանում Ֆրանսիայի դեսպան Ֆիլիպ Լոֆորի, իր երկիրը կովկասյան տարածաշրջանում հատուկ շահեր է հետապնդում: Դեռևս 2004թ. սեպտեմբերի 28-ին Վրաստանի ԶՈՒ Գլխավոր սպայակույտի ղեկավարի տեղակալ Լևան Նիկոլաիշվիլին և Վրաստանում Ֆրանսիայի դեսպան Ֆիլիպ Լոֆորը ստորագրեցին 2005թ. երկու երկրների միջև ռազմական համագործակցության վերաբերյալ պայմանագիրը, որը վերաբերում էր, մասնավորապես, լեռնառազմական, բժշկական և կրթական հարցերին: Ըստ համաձայնագրի, 2005թ. վրացի զինծառայողների վերապատրաստման առաքելությամբ Վրաստան կայցելեն ֆրանսիացի ռազմական հրահանգիչներ, իսկ վրացի զինվորականները փորձառության նպատակով կմեկնեն Ֆրանսիա: Արդեն 2004թ. հոկտեմբերի 11-ին Բաթումի նավահանգիստ էր ժամանել Ֆրանսիայի ռազմածո-

վային ուժերի *Enseige de Vaisseau Jacoubet* ռազմանավը, որը հոկտեմբերի 14-ին վրացի ծովայինների հետ համատեղ մասնակցեց զորավարժություններին:

Ռազմական համագործակցություն այլ երկրների հետ

Պաշտոնական Վրաստանը ԶՈՒ արդիականացման ու համալրման խնդիրները լուծում է գլխավորապես ի հաշիվ ՆԱՏՕ-ի անդամ երկրների կողմից հատկացվող ռազմական տեխնիկայի և սպառազինության: 1990-ական թթ. երկրորդ կեսին Վրաստանը ՆԱՏՕ-ի անդամ պետություններից և Ուկրաինայից ձեռք բերեց մի քանի ռազմանավ:

Մասնավորապես, ակտիվացել են վրաց-բուլղարական հարաբերությունները: Սպառազինության առևտրով զբաղվող միջազգային ընկերություններից մեկի ղեկավարի հավաստմամբ, դեռևս 2004թ. հունիսի վերջին - հուլիսի սկզբներին Փոթի էին բերվել Բուլղարիայից գնված 122 մմ-անոց տրամաչափի հաուբիցի և *Տ-72* տեսակի տանկերի համար նախատեսված 125 մմ-անոց արկեր, ձեռքի հակատանկային նռնականետեր և այլ զինամթերք՝ $5 մլն ընդհանուր արժողությամբ: Թբիլիսին նախատեսում է բանակցել բուլղարական ընկերությունների հետ հրաձգային և հրետանային զենք ու զինամթերք գնելու հարցի շուրջ: Գործարքը, ըստ որոշ աղբյուրների, կկազմի $6 մլն:

Վրաստանի հետ ռազմական և մասնավորապես ռազմածովային պաշտպանության բնագավառում համագործակցում է նաև Հունաստանը: Դեռևս 2002թ. հուլիսին կողմերը ստորագրել էին «Վրաստանի ռազմածովային ուժերի վերակազմակերպման շուրջ» արձանագրությունը: Արձանագրությունը նախատեսում էր Հունաստանում վերանորոգել Վրաստանի ռազմածովային ուժերի (ՌԾՈՒ) երկու՝ «Իվերիա» և «Մեստիա» պարեկային ռազմանավերը, ինչպես նաև Հունաստան վերապատրաստման ուղարկել վրացի 20 տեխնիկական մասնագետներ և ՌԾՈՒ զինծառայողներ: Հունաստանի ղեկավարությունը, իր հերթին, պատրաստակամություն է հայտնել վերականգնել Փոթիի ծովային պաշտպանության ռազմակայանն ու ռազմանավամատույցների ենթակառուցվածքը: Իսկ 2002թ. սեպտեմբերին ծրագրվում էր Վրաստանի ՌԾՈՒ-ում հիմնել հույն ռազմական խորհրդատուի ինստիտուտ, որը զբաղվելու էր երկրի ծովային պաշտպանության ուժերի վերակազմակերպչական հարցերով: Ռազմական խորհրդատուն մշտական կարգավիճակով աշխատանքները համակարգելու էր Փոթիում: 2004թ. սկզբին Հունաստանի կառավարությունը՝ որպես դրամաշնորհ, նախատեսում էր Վրաստանի ՌԾՈՒ-ին հատկացնել Ֆրանսիայում կառուցված 300 տոննա ջրծավալի հրետանային ռազմանավակ:

Ի թիվս վերոնշյալ երկրների, զարգանում են նաև վրաց-գերմանական ռազմական կապերը։ Դեռևս 2001թ. կողմերը ստորագրել են համաձայնագիր, ըստ որի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) կառավարությունը Վրաստանին հատկացրեց դրամաշնորհ՝ մասնավորապես տրամադրելով ռազմատեխնիկա, այդ թվում՝ 50 ռազմաբեռնատար, զինծառայողական համազգեստներ։ 2003թ. մարտի 4-ին Թբիլիսի էր ժամանել ԳԴՀ արտաքին գործերի նախարար Օտտո Շիլին, որը հանդիպել էր երկրի նախկին նախագահ Էդ.Շևարդնաձեի հետ։ Բանակցություններում կողմերը, ի թիվս այլ խնդիրների, համաձայնության էին եկել ահաբեկչության, թմրանյութերի ու զինամթերքի ապօրինի շրջանառության դեմ պայքարում երկկողմ համագործակցության շուրջ։ Նշենք, որ Աֆղանստանում վրացի խաղաղապահներն իրենց պարտականություններն իրականացնում են գերմանական խաղաղապահ ստորաբաժանումների կազմում։

Շարունակվում է ռազմական համագործակցությունը Վրաստանի և Իսրայելի միջև։ 2004թ. հուլիսի վերջին Իսրայել կատարած այցելությունից հետո Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին հայտարարեց վրացական հատուկ նշանակության զորքերի համար «Տավոր» տեսակի շուրջ 1.000 ինքնաձիգ գնելու մտադրության մասին։ Վրաստանը երկրորդ երկիրն է դառնում Հնդկաստանից հետո, որն Իսրայելից գնում է *Tavor Tar-21* տեսակի ինքնաձիգներ (Հնդկաստանը Իսրայելից $20 մլն արժողությամբ 5.56մմ տրամաչափի «Տավոր» ինքնաձիգ գնելու պայմանագիր է ստորագրել)։